# Արձանագրություն N 3
## «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/11Շ» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «17» ապրիլի 2018թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Գասպարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մեսրոպյանը և Ա. Պապյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս.Թամրազյանը

### I. Բաց մրցույթ ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին
(Կ. Գասպարյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

- մասնակիցը սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան ներկայացրել են գնումների մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները),
- հանձնաժողովի քարտուղարը վերոգրյալ փաստաթղթերը (տեղեկությունները), գնահատման թերթիկների երկուական օրինակները և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը տրամադրել է հանձնաժողովի անդամներին,
- մասնակցի որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն չի արձանագրվել (հայտնաբերվել) և գնահատվել է «Բավարար»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

### II. Բաց մրցույթ ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին և հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին
(Կ. Գասպարյան)

2. Հանձնաժողովը որոշեց.

ա) ընտրված մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակցի թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

- "Կապավոր" ՍՊԸ-ին:

բ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված պահանջների համաձայն՝ անգործության ժամկետ չկիրառել, քանի որ միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել և ընտրված մասնակցի հետ սահմանված կարգով կնքել համապատասխան աշխատանքների կատարման պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

…ժամը և վայրը որոշելու մասին:

---

(Կ. Գասպարյան)

3. «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/11Շ» ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 12:00-ին, ՀՀ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների 2-րդ հարկ, N 208 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ____________ Կ. Գասպարյան

Անդամներ՝ ____________ Ն.Մեսրոպյան

____________ Ա. Պապյան

Քարտուղար՝ ____________ Ս. Ծամրաջյան